

ՋԱԼԻԼ ՄԱՄԵԴԿՈՒԼԻՋԱԴԵ (ՄՈՒԼԱ ՆԱՍՐԵԴԴԻՆ)

(Մենդյան 100-ամյակի առթիվ)

ԱՔՊԵՐ ԵՐԵՎԱՆԼԻ

Աղբյուրներից հանձնարված ժողովուրդը տոնում է իր մեծ զավակի, դրող ու հրապարակախոս, ժուռնալիստ և ռեժիսոր Ջալիլ Մամեդկուլիզադեի (Մուլա Նասրեդդինի) ծննդյան 100-ամյակը:

XX դարի առաջին երեք տասնամյակի աղբյուրներից հանձնարված ժողովուրդը, մամուլը, ռեժանրապետ մշակույթը սերտորեն կապված են Ջալիլ Մամեդկուլիզադեի անվան հետ: Նրա գեղարվեստական ստեղծագործության մեջ իր վառ և համոզիչ արտացոլումն են գտել աղբյուրներից հանձնարված ժողովրդի կյանքն ու կենցաղը, նրա ռեժիսորական-դրամատիկական հայացքները, ազատության, լուսավորության, մշակույթի, երջանիկ ապագայի վերաբերյալ նրա իդեալներն ու ցանկությունները: Մեծ են Միրզա Ջալիլի ծառայությունները՝ որպես «Մուլա Նասրեդդին» ամսագրի հիմնադրի (1906 թ.), նա մուլանասրեդդինյան զրական հոսանքի կազմակերպիչն ու ողին էր: Պրոֆեսոր Մ. Զ. Զաֆարովը իրավացիորեն նշում է, որ Մ. Ֆ. Ախունզովի փիլիսոփայական նամակներից հետո «...Աղբյուրների երկրորդ մեծ գիրքը ստեղծեց Ջալիլ Մամեդկուլիզադեն: Այս գիրքը... «Մուլա Նասրեդդին» էր»¹:

Աղբյուրներից հանձնարված մեծ հեղափոխական բանաստեղծ Միրզա Ալեքսանդր Սարիրին էլ «հայտնաբերել» է Միրզա Ջալիլը: Ա. Հակվերդիսին, Ալի Նազմիին, Ա. Ղամգյուսարին, Օմար Ֆայիզին, Մ. Ս. Օրդուբադիին և տասնյակ այլ դրողների նա է «մուլանասրեդդինական» դարձրել: Հետևողականորեն օգնել է նրանց անվախորեն պայքարելու ցարիզմի, բուրժուազիայի, հողատերերի, նախնախոսական կուսակցությունների, տգիտության, ֆանատիզմի, արևելյան և արևմտյան բռնապետության դեմ:

Աղբյուրներից հանձնարված զրականության ոսկե ֆոնդի մեջ են մտնում նրա «Դանաբաշ գյուղի ղեկավարը» վիպակը, տասնյակ ու հարյուրավոր պատմվածքներն ու ֆելիետոնները, «Մեղեդիներ», «Իմ մոր գիրքը», «Կյանքի ճանապարհ» և այլ դրամատիկական երկերը, որտեղ մեծ երգիծաբանը սպանի երգիծանքի գրիչը գեներ դարձնելով՝ հարվածել է փոքր ու մեծ տգեղություններին, մուլաններին ու գերվիշներին, կարմրամորուք մեղադիրներին ու հաջիներին, առևտրականներին, ինչպես և բարձրաստիճան պաշտոնյաներին՝ ցարական մինիստրներին, դոմայի անդամներին, ծաղրել է ցար Նիկոլային, Իրանի Մուհամեդ Ալի շահին, թուրքական սուլթան Աբդուլ Համիդին, եվրոպական իմպերիալիստներին:

Զ. Մամեդկուլիզադեն ժողովուրդների բարեկամության դրոշակակիրն էր: Նա իր ամբողջ գիտակցական կյանքի ու ստեղծագործության ընթացքում միշտ բարեկամության ու եղբայրության կոչ է արել ժողովուրդներին, մեծ ջանքեր է թափել նրանց միջև բարի-զրացիական հարաբերություններն ամրապնդելու համար: Մեծ գրողին հետաքրքրել են ոչ միայն աղբյուրներից հանձնարված ժողովրդի, այլև ռուս, հայ, վրացի, իրանցի, թուրք և այլ ժողովուրդների երջանկության ու ազատության հարցերը: «...Աշխարհում մարդիկ բոլորն էլ իրար են նման, նրանք էլ իրենց համար մարդիկ են, մենք էլ՝ մեզ համար»², — ասել է Միրզա Ջալիլը և աշխարհի տարբեր ժողովուրդներին միասնության կոչ արել:

Զ. Մամեդկուլիզադեն բոլոր ժողովուրդների երջանկությունը տեսել է «հավիտենական խաղաղության» մեջ: «Բայց, վերջիվերջո, — գրել է նա, — կարծես թե «հավիտենական խաղաղություն» ունի միայն մեկ ճանապարհ. լեզուս շորանա, չգիտեմ՝ ասե՛մ, թե չասեմ: Աստված վկա, մի վայրկյան այսպես մտածենք, երկրի երեսին այլևս ոչ մի կրոն չկա, այսինքն, բոլոր ազգերը անկրոն են, այսինքն՝ չկան այլևս այս ազգերից ոչ մեկին դրախտով ու դժոխքով խաբող տերտերներն ու մուլանները և նույնպես չկան ոչ գյավուր, ոչ հավատացյալ, ոչ սյունի,

¹ М. Ч. Чәфәров, Өдәби дүшүнчәләр, 1958, էջ 130.

² Ч. Мәмәдгулузада, Фелъетонлар, мәгаләләр, хагирәләр, мәктүбләр, Бакы, 1961, էջ 367.

Քնդանոթով ոմրակոծող» ցարական դեներալ Գոլոշապովին, բարձրաձայն բացականչել է. «...72 ազգ զուխ բարձրացնելով՝ բռնել են քո թագավորի ոձիքից և ասում են. «Կյանքդ վկա, ո՛վ թագավոր, արդեն հերիք եղավ միջև աշտո, այլևս չենք թողնի, որ քո վեզիրները և զուրհրնատորները մեղ խեղդեն»⁷։

Ջ. Մամեղկուիզադեն ազգամիջյան ընդհարումների՝ ցարիզմի կողմից կազմակերպված չինեյր ընթերցողների ուշադրությանն է ներկայացրել «Մուլա Նասրեղլին» ամսագրի առաջին խսկ համարում տպագրած ծաղրանկարներում։ Ծաղրանկարներից մեկի բովանդակությունը հետևյալն է. հարուստ հայր ցարական զինվորին փող է տալիս և ասում. «Վազմի դենգի, դաշայ ուռժյո»։ Իսկ երկրորդ ծաղրանկարում տեսնում ենք, որ հարուստ մուսուլմանը անասուններ է տալիս ցարական զինվորին՝ փոխարենը զենք ստանալու համար։ Բովանդակության տեսակետից երկու ծաղրանկարները նույնն են։ Նրանք մերկադնում են ցարիզմին, որպես ազգամիջյան ընդհարումների կազմակերպչի։

Հայտնի նկարիչներ Օ. Շմերլինգի և Ռոտտերի այդ ծաղրանկարների հրապարակումը «Մուլա Նասրեղլին» ամսագրի առաջին խսկ համարում ապացուցում է այն մեծ հուզմունքը, որ ապրում էր ամսագրի հիմնադիր և խմբագիր Ջ. Մամեղկուիզադեն ազգամիջյան ընդհարումները պատճառով։ Այդ հուզմունքը ավելի է զգացվում ամսագրի համարներում Ջ. Մամեղկուիզադեի ձեռքով գրված տարրեր նյութերում։ Մեծ գրողը հաճախակի անդրադառնում էր այդ հարցին, համարձակորեն մերկացնում ընդհարումների կազմակերպիչներին, ժողովրդին կոչում բարեկամության և եղբայրության։ Գրական տարրեր ձևերի (ֆիլիստին, հողված, հարց, հեռագիր, առած և այլն) օգտագործումը ավելի ուժղին էր դարձնում հեղինակի մերկացնող խոսքը։ Բերենք մի քանի օրինակներ.

Ա ո ա ծ

«Ձին ձիու հետ կկովի, կառավարության գործը կհաջողի»⁸.

Այս առածը հորինվել է «շուներ շան հետ կկովի, ճամփորդի դործը կհաջողի» աղբյուրանական առածի հիման վրա և ունեցել է ազգամիջյան կոիվները մերկացնելու նպատակը։

Հ ա ր ց Ե Ր

«Ութերորդ. Սա ի՞նչ գաղտնիք է, որ հայ-մուսուլմանական ընդհարումները սկսելուն պես կառավարության զինվորները այնպես հիվանդացան, որ բժիշկները արգելում են նրանց փողոց դուրս գալ»⁹։

«Կովկասում ամսական մեկ միլիոն մուսուլման և հայ իրենց կյանքը մեզ են բաշխում։ Այդ հաշվով հինգ տարուց հետո Կովկասում քանի՞ մուսուլման և հայ կմնա»¹⁰։

Հեռագրային լուրեր

«Յոթերորդ հեռագրային լուր. Նախիջևանի ոռու կազակները զենքերալ-նահանգապետին դիմում տալով խնդրել են, որ նրանց փամփուշտի փոխարեն շատ լուցկի տրվի»¹¹։

Ջ. Մամեղկուիզադեն մի քանի տարի հետո այդ հեռագիրը այսպես է բացատրել. «Գրախմաստը այն է, որ հայ-մուսուլմանական ընդհարումների ժամանակ, երբ երկու տխմար հարկաններ իրար կոտորում էին, ոռու կազակներն էլ մի կողմից էին սկսել քաղաքը հրդեհել»¹²։

Ջ. Մամեղկուիզադեն բացեփրաց մերկացնում էր ազգամիջյան կոիվներ հրահրողներին։ Իրանցից մեկն էր Շուշի քաղաքի դեներալ-նահանգապետ Գոլոշապովը։ Նա Բաքվում ազգամիջյան կոիվներ հրահրող զենքերալ Նակաշիձեից ոչնչով ետ չէր մնում։ Նրա հրամաններով ուներ ավերվում էին Քնդանոթներով, Նվ ըստ սովորության, այս բոլոր սարսափների մեղքը

⁷ Նույն տեղում, էջ 64—65։

⁸ Կ. Մամեդգուլազադե, Сечилимиш эсэрлэри, I чилд, Баку, 1951, էջ 452։

⁹ Նույն տեղում, էջ 451։

¹⁰ Կ. Մամեդգուլազադե, Фелъетонлар..., էջ 43։

¹¹ Կ. Մամեդգուլազադե, Сечилимиш эсэрлэри, I ч. էջ 450։

¹² Նույն տեղում։

առաջներում դարեր շարունակ իրար հետ եղբայրաբար ապրող երկու հարևանները հանկարծակի, որպես գիշատիչ զազաններ, բնական իրար վրա: Եվ ով որ ծանոթ էր այն ժամանակ ոռոնապոնական պատերազմի հետևանքով թուլացած ցարական կառավարության վիճակին և քաղաքականությանը, նա կարող էր տեսնել, որ հայ-մուսուլմանական ատելությունը բավական նպատակահարմար հարց եղավ Պետերբուրգի քաղաքականությանը, որովհետև Կովկասի այս երկու մեծ ազգերը եթե զբաղված լինեին իրենց ներքին հոգսերով ու վշտերով, իհարկե, ժամանակ չէին գտնի խառնվելու ոռոսական կառավարության քաղաքականությանը: Եվ հետագայում հայ-մուսուլմանական կոնֆլիկտի պատմությունը կարդացողները և զահրենկեց արված նիկոլայի արխիվը փնտրող և այնտեղից զաղտնի նյութեր գտնողները հանդիպեցին այնպիսի փաստաթղթերի, որոնք պարզորեն ապացուցեցին, որ հայերին մուսուլմանների, մուսուլմաններին՝ հայերի վրա հրահրողը միմիայն ոռոսական կառավարությունն էր: Դրա համար էլ այս երկու հարևանների ամենաազնիվ, մարդասեր, բարեկամ և կրթված տարրերը ինչքան էլ ձգտեցին հանդիպել այդ ատելությունը, մեղսելու գործող զաղտնի սատանաների և գործակալների շնորհիվ այդ զահրումար ատելությունը դեռ երկար տարիներ շարունակվեց և հազարավոր անմեղ աշխատավորների դժբախտության պատճառ հանդիսացող մի ցավ դարձավ¹⁸:

Բուլչեկյան կուսակցության, բուլչեկյան և բանվորական մամուլի, հայ և ադրբեջանական դեմոկրատական ուժերի, այդ թվում՝ առաջադեմ գրողների և մամուլի ջանքերն իզուր չանցան. կանխվեցին 1905—1907 թթ. հայ-մուսուլմանական կոնֆլիկտը, բուլոն էլ հասկացան դրանց անիմաստությունը, հաղթանակեց առողջ բանականությունը, հինավուրց բարեկամությունը: Այդ հաղթանակը իր փայլուն արտացոլումը գտավ «Մուլա Նասրեդդին» ամսագրում: Ջ. Մամեդկուլիզադեն 1907 թ. ամսագրում տպագրել է նկարիչ Ռոտտերի՝ բովանդակությամբ իրար հետ կապված երեք ծաղրանկարներ: Առաջին ծաղրանկարում այսպիսի մի տեսարան կա. տղետ մուսուլման և հայ գյուղացին դաշույնները հանելով հարձակվել են իրար վրա, սատանան տեսնելով իր սարքած որոգայթի հաղթանակը, հրձկանքով քրքրում է: Երկրորդ ծաղրանկարը. մուսուլմանը և հայը արդեն իրար հռչոտում են, իսկ սատանան ուրախությունից թրոշկոտում է: Երրորդ ծաղրանկարը. մուսուլմանը և հայը հասկանալով իրենց սխալը, դաշույնները գետին են նետել, հաշտվել, զրկախառնվելով համբուրվում են, իսկ սատանան տեսնելով իր մերկացումը՝ թողնում փախչում է: Ծաղրանկարի տակ հետևյալ խոսքերը կան. «Կար, չկար, աշխարհում աստծուց բացի ոչ ոք չկար, բայց կար մի տիմար հայ և մի տիմար մուսուլման և դրանից բացի՝ մի սատանա կար: Մի օր այս սատանան ես վերացավ»¹⁹:

Ժողովուրդների առաջադեմ ուժերի ջանքերի շնորհիվ կանխվել էին ազգամիջյան բնահարումները: Այդ ուժերը պարզ կերպով գիտակցում էին, որ միայն միասնությունը, առողջ փոխադարձ ըմբռնումը կարող է անդրկովկասյան ժողովուրդներին հասցնել ազատության և անկախության: Ջ. Մամեդկուլիզադեն ադրբեջանական միջավայրում այդ զաղափարների արտահայտիչն էր: 1917 թ. նա գրում էր. «...Կովկասի ազգերն էլ ազատ լինելու (ինքնուրույն պետականություն ունենալու.—Ա. Ե.) ճանապարհին պայքարելու իրավունք կարող էին ունենալ. բայց... նրանց անգործության պատճառը հենց այդ երեք հարևանների իրարից զգուշանալն է»²⁰:

Մուսավաթականների տիրապետության ժամանակ Ադրբեջանում տեղի ունեցած մղձավանջը, մուսավաթականների ու դաշնակների 1918 թ. Ղարաբաղում կազմակերպած հայ-ադրբեջանական նոր կոտորածը ավելի ևս բորբոքեց Ջ. Մամեդկուլիզադեի ատելությունը երկու ժողովուրդների արյունոտ թշնամիների դեմ, ատելություն, որ նա արտահայտեց հայտնի «Քյամանչա» պիեսում:

Մեկ գործողությամբ այս երկը ստեղծվել է 1920 թ. հունվարին Շուշի քաղաքում, գրողն անմիջական տպավորությունների տակ:

«Քյամանչան» ազդեցիկ, խոր հոգեբանական մի պիես է: Պատահական չէ, որ պրոֆ. Աղիյ Ըարիֆը այն անվանում է «լիրիկական երկ», «բանաստեղծական պիես»²¹:

Դրամատուրգը իր ընթերցողին նախ և առաջ ծանոթացնում է հայ-մուսուլմանական բնահարումների մասնակիցների հետ: Ղահրաման յուզբաշին, նրա յասավուլ Կարաշը, Հասանալին, Ազիզը, Գասրմալին արյունարբու ոճրագործներ են: Նրանք կոչվում են հայերի դեմ: Բայց ինչու.

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ «Молла Нәсрәддин», 1907, № 13.

²⁰ Ч. Мәммәдгулузadə, Фелјетонлар..., էջ 374—375:

²¹ Әзиз Шәриф, Молла Нәсрәддин (Чәлил Мәммәдгулузadə). Бакы, 1946.

ինչ պատճառով: Հայերի հետ հավիտենական հարևաններ և բարեկամներ այս մարդիկ ինչո՞ւ են զինվել, սար ու ձոր ընկել: Միայն մի պատճառով. նրանք լցված են վրեժխնդրության զգացումով: Բայց նրանցից ոչ մեկը չի մտածում այն մասին, թե այդ ընդհարումները ո՞վ և ինչո՞ւ կազմակերպեց, ո՞ր է հասնելու դրա վերջը: Ընդհանուր է, Ղահրաման յուզրաշու արտահայտություններում արդեն զգացվում են անհամբերության երանդներ. կոտորածը, վախը, անհանգիստ կյանքը նրան հոգնեցրել են: Նա իրենց կատարած ոճրագործությունների մասին գոռոզամտորեն խոսող ընկերներին այսպես է ասում. «Այ մարդիկ, դուք աստված, դուք մարգարե, թողեք այս խոսակցությունը: Հիմա ինչ եղել է, եղել է: Թողեք մի ժամ ականջներս հանգստանան»²²: Բայց այս խոսքերը դեռևս լիովին չեն ապացուցում, թե նա զղջացել է: Նա ինքն էլ շարունակում է գոռոզանալ և եթե ձեռքը որս ընկնի, պատրաստ է հռչակելու:

Երկի դեպքերը տեղի են ունենում Ղարաբաղում. Ղահրաման յուզրաշին և նրա խմբի անգամները նստած են սարալանջին, գյուղից դուրս, կանաչի վրա հանգստանում են: Նրանք խուսում են կոտորածի մասին, հիշում իրենց սպանված ընկերներին, պատմում իրենց «հերոսությունները»:

Այդ պահին նրանք նկատում են ճանապարհով անցնող երկու հայերի: Ղահրաման յուզրաշին նրանց բռնելու համար ուղարկում է իր ընկերներին: Հայերից մեկը փախչում և թաքնվում է Ղազանչի գյուղի այգիներում և փրկվում: Իսկ նրա ընկերոջը՝ քյամանչա նվագող Բախշին բռնում բերում են Ղահրաման յուզրաշու մոտ: Նա ասում է, որ իր ընկերոջ՝ թառ նվագող Գրիգորի հետ միասին դալիս են Զեյմարասարից, Զուլֆուգար բեկի տղայի հարսանիքից: Ղահրաման յուզրաշին զայրանում է և սկսում Բախշին վիրավորել ու վախեցնել: «Շատ լավ, շատ լավ, դուք գնացե՛ք մուսուլմանների հարսանիքներում փլավ կերեք, հիմար մուսուլմանների փողերը լցրե՛ք գրպաններդ, Ղազանչու հայերն էլ գիշերը թաքուն թափվեն մուսուլմանների գյուղերը ու կրակ տան: Բա բավական չէ՞ ձեզ: Ախր ես չգիտեմ, թե այս երկու գույգ մի կենտ հայերն ինչ են ուզում մեզանից»²³:

Բախշին մի խեղճ մարդ է: Նա ոչնչից տեղյակ չէ, նա նույնիսկ չգիտե, թե այդ հայ-մուսուլմանական կռիվն ով է սարքել: Քյամանչա նվագող Բախշին շատ վաղուց աղբյուրանցիների հետ բարեկամություն է անում, սիրում է նրանց լեզուն, երաժշտությունը, ոգևորությամբ ու սիրով կատարում աղբյուրանական ժողովրդական երգերը ամենուրեք՝ ուրախությունների, հարսանիքների ժամանակ: Կոտորածների սարսափելի օրերին անգամ Բախշին աղբյուրանցիների նկատմամբ ունեցած իր հավատը չի կորցնում, դնում է Զուլֆուգար բեկի որդու հարսանիքին նվագելու: Ղահրաման յուզրաշու հայհույններին որպես պատասխան Բախշին միայն սա է կարողանում ասել. «Ազա, հավատս վկա, տեղեկություն չունեմ: Աստված (ձեռքը բարձրացնում է դեպի վեր), դու մարդիմազարի տունը քանդես (լաց է լինում)»²⁴:

Բախշին կյանքի, արվեստի մարդ է: Նա սրտանց սիրում է կյանքը, մարդկանց, իր ընտանիքը, իր տղային՝ Մուկուշին: Նա իր արհեստի սիրահարն է: Կյանքից, սիրելի որդուց, իր քյամանչայից բաժանվելու վտանգը սարսափեցնում է Բախշին: Նա անհույս վիճակում ուզում է արցունքներով սփռվել իր վիրավորված սիրտը: Տեսնելով իր մոտակա մահը, քյամանչան մեկնում է նովրուզին, որին ճանաչում էր: «Նովրուզ, եղբայր, դու լինես՝ մեզ ստեղծող աստվածը, իմ մահից հետո այս քյամանչան ոչ մեկին չտաս: Մեր մեջ երբ խաղաղություն կնքվի, նեղություն կքաշես գտնել իմ որդուն՝ Մուկուշին և այս քյամանչան կտաս նրան: Մատաղ քեռ, Նովրուզ, կտաս ղազանչեցի քյամանչա նվագող Բախշու որդուն՝ Մուկուշին»²⁵:

Քյամանչա պիեսի մի այլ տարբերակում կա այսպիսի մի նախադասություն, որն արտացոլում է Բախշի և Նովրուզի հին բարեկամությունը: Այդ տարբերակում Բախշին Նովրուզին ասում է. «Ախր դու իմ տղային ճանաչում ես, հիշո՞ւմ ես, անցյալ տարի ձեզ մի ճախարակ էր բերել, դու էլ նրան մի գնդակ նվիրեցիր»²⁶:

Բախշին տաղանդավոր արվեստագետ է: Ղահրաման յուզրաշու զինակիցներից Ազիզն էլ այդ է վկայում: «Բայց, Ղահրաման յուզրաշի... — ասում է նա, — այդ անաստվածի տղան դիտե՛ս, թե ինչպես է քյամանչա նվագում»²⁷:

²² Ч. М ə м ə д г у л у з а д ə, Сечилмиш əсəрлəри, II чилд, Бакы, 1964, էջ 90:

²³ Զ. Մ ա մ ե դ կ ու լ ի դ ա դ ե, Երկեր, Երևան, 1958, էջ 168 (թարգմ. Ս. Այվաղյանի):

²⁴ Նույն տեղում:

²⁵ Նույն տեղում, էջ 169:

²⁶ Ч. Х. Н а ч и я е в, XX əср Азəрбајҹан əдəбијҹаты тарихи, Бакы, 1955, էջ 119:

²⁷ Զ. Մ ա մ ե դ կ ու լ ի դ ա դ ե, Երկեր, Երևան, 1958, էջ 170:

Ղահրաման յուզրաշու նմանները չեն կարող հասկանալ, թե ինչ է նշանակում արվեստի սերը, «Այ հայ, սա ի՞նչ բան է, որ այդքան սիրում ես» — ասելով Ղահրաման յուզրաշին հետաքրքրությամբ և զարմանքով նայում է թյամանչային, հետո «խղճում» է և թույլ տալիս վերջին անգամ նվաղելու:

Սկսվում է պիեսի ամենադրամատիկական, հոգեբանական հույզերով ու սարսափներով լի հատվածը: Ջ. Մամեդկուլիզադեն գրում է. «Բախշին ոտքի է կանգնում, առնում թյամանչան, նստում է մի կողմ, դնում է ծնկանը, կարգի է գցում կտրված լարը, ապա լարում է, հետո երեսը դարձնում դեպի Ղադանչի դուղը, ախ է քաշում և հայերեն ասում. «Ախ, իմ սիրելի որդի Սուկուլ...»: Հետո նայում է հավաքվածների երեսին ու Ռաստ է նվագում»²⁸:

Հենց այստեղ Ջ. Մամեդկուլիզադեն վարպետորեն նկարագրում է Ղահրաման յուզրաշու հոգում և գիտակցության մեջ տեղի ունեցող փոփոխությունը, զուխ բարձրացնող զղջման զգացմունքները: «Ռաստից շիքաստեի ֆարս անցնելու ժամանակ Ղահրաման յուզրաշին աչքերը հառած հային և ականջները թյամանչային, կանգնած տեղից կամաց նստեց և Բախշիի նվաղելու ընթացքում դաշույնը կամաց-կամաց, կարծես թե իրենից անկախ, խրեց պատյանը և շարունակեց լսել: Մարդիկ բոլորն էլ լռության մեջ են: Բախշին վերջացրեց նվագը, վախի և սպասողական դրության մեջ նայեց յուզրաշու երեսին»²⁹:

Բախշիի հիասթափելի երաժշտությունը հարբեցրել էր բոլորին: Ղահրաման յուզրաշու հոգին լցվել է կասկածներով. հային սպանի՞, թե ոչ: Նրա հոգուց երկու ձայն է լսվում. մեկը՝ վրեժխրեղության, մյուսը՝ խղճի ձայնը:

Ղահրաման յուզրաշու հակասություններով լի բարդ վիճակը իր փայլուն արտահայտությունն է գտել նրա ներթոհչյալ խոսքերում. «Ղահրաման յուզրաշի. (չղային, երեսը դարձնում է իր ընկերներին, մի քիչ ցածր ձայնով) Տեր աստված, չար սատանան ասում է (դաշույնը հանում է պատյանից, ոտի կանգնում, երեսը դարձնելով ընկերներին՝ ասում է). Եվ դուք կարծում եք, որ էս չուլախ հային սպանելով սիրտս հովանալու՞ է: Զի հովանալու (մի քիչ նայում է հայի կողմը, լռում): Մի հալա սրան նայեք, տեր աստված, աշխարհում ոչ մի հարամզադություն չմնաց, որ սրանք սովորած չլինեն: Սատանային կոշիկ են կարում: Այս չուլախն էլ թյամանչան կրծքին բռնած տես ինչ օյիններից է դուրս գալիս: Հարամզադան այնպես է նվագում, որ անցած ու երբ բերում, դնում է մատդու առաքը» (ընդգծումը մերն է. — Ա. Ե.) — Ով մեծ աստված (Քարաշին), Քարաշ, մի ծխախոտ վառիր»³⁰:

Բախշին սկսում է նորից նվագել, և այս անգամ Ղահրաման յուզրաշին լրիվ դինամիկ լինում: Նրա ընկերներն էլ, հիշելով անցած օրերը, ընկճվել են, քարացել: «Ախ, վայ» (յուզրաշու այս խոսքերն ասելու ժամանակ Բախշին նվագում է դանդաղ: Մարդկանցից շատերն էլ ախ էն քաշում: Բախշին նորից եռանդով նվագում է: Յուզրաշին աչքը Բախշիի վրա երբեմն քրթմընջում է). Տես, այսպես... այնպես... լավ է, աֆարիմ... այդպես, այդպես...»³¹:

Վերջապես Ղահրաման յուզրաշին «...հանկարծակի վեր կացավ, դաշույնը հանեց պատյանից և շարացած, Բախշին բարձրաձայն ասաց. ադա էրմանի, շուտ թյամանչադ վերցրու, կորիր, այստեղից գնա, թե չէ, հորս գերեզմանը վկա, երգվում եմ ընկերներիս զխով, որ այս դաշույնով այս բոպին քեզ էլ կսպանեմ, ինձ էլ կսպանեմ (բղավում է). թող գնա»³²: «Քեզ էլ կսպանեմ, ինձ էլ կսպանեմ»:

Աղբյուրների ժողովրդական գրող Մեհմեդ Հյուսեյնը շատ դիպուկ ձևով նշել է, որ այդ արտահայտություններից հետո, «այն պահից յուզրաշու մի կտոր փայտ անվանած այդ թյամանչան և այն նվագող հայը վեր են ածվում երկի զխավոր հերոսներին»³³:

Բախշին վախվիսելով նայում է մարդկանց երեսին, վերցնում է թյամանչան և շտապ հեռանում է: Բոլորը լուռ, մտածկոտ են: Ղահրաման յուզրաշին մնում է իր կանգնած տեղը և լուռ նայում Բախշիի գնացած կողմը: Դրանից հետո տեղի է ունենում կարևորագույն մի դեպք: Ղահրաման յուզրաշին ձեռք է քաշում գնդից: Նա բոլոր մեղքերի պատճառը ժամանակի մեջ է տեսնում, «նամարդ» աշխարհում: Հասկանում է, որ հայ-մուսուլմանական կոնֆլիկտը հրա-

²⁸ Նույն տեղում:

²⁹ Գ. Мəм мəдгүлүзadə. Сечилимиш әсәрлери, II ч., էջ 93:

³⁰ Նույն տեղում:

³¹ Նույն տեղում:

³² Նույն տեղում, էջ 96:

³³ Мехди Нүсєји, Өдәбијјат вә инчәсәнәт мәсәләлери, Баки, 1958, էջ 133:

հրվել են նամարդների կողմից, նա ատում է զենքը, արյունը, մահը: Բախշիի գնացած կողմը մի քիչ էլ նայելուց հետո դաշույնը նետում է զետին և հարձեւ ինքն իրեն ասում:—

— Է՛հ, նամարդ աշխարհ:...

«Քյամանչա» պիեսը վարպետորեն զրված մի երկ է: Նա զարմացնում է ընթերցողին իր վերին աստիճանի կուռ կոմպոզիցիայով և սոցիալ-քաղաքական հարցերի միջոցով ընթերցողին: Պրոֆեսոր Միր Զալալ Փաշանը բարձր է գնահատել պիեսի դրամատիկական հակիրճությունը. «Երկում զրվում են ընդամենը երկու-երեք ավարտված կերպարներ, բայց նրանց միջոցով պարզ կերպով երևում է այն ժամանակվա հասարակույթյունը, պաշտոնային քաղաքի ողորդությունը»³⁴:

Ջ. Մամեդկուլիզադեն ուրախությամբ դիմավորեց և սրտանց ողջունեց սովետական կարգերը, որոնք իրապես լուծեցին ազգային հարցը և ստեղծեցին ժողովուրդների իսկական բարեկամության աշխարհ: Շատ շուտով մեծ գրողը հասկացավ, որ այդ կարգերը հավիտենական խաղաղություն են հաստատել նաև հայ ու ադրբեջանական ժողովուրդների միջև, ընդմիջող վերացրել էն մոտ անցյալի ազգային թշնամանքը: Միրզա Զալիլը գրել է. «Հայ-մուսուլմանական թշնամանքը այս երկու հարևանների պատմության մեջ սև էջեր են և արյունոտ մի հիշատակ: Եվ անցյալում ինչ եղել է՝ անցել զնացել է: Եվ ես ամենաջերմ համոզմունքով ասում եմ, որ այդ սև օրերը մեր երկրում կմնան որպես մի տխուր հիշատակ: Այս երկու հարևանների և երկու եղբայրների զժողովուրդներն ընդմիջող վերացել է, ինչպես վերացել է այդ դժբախտությունն ստեղծող և այն ողորդող կառավարությունը»³⁵:

Սովետական իշխանության տարիներին երկրի բոլոր ժողովուրդները հնարավորություն ստացան ոչ միայն ազգային զարգացման, այլև փոխադարձ հարգանքի, նպատակների միասնության վրա հիմնված նոր սոցիալիստական հարաբերությունների զարգացման համար: Ջ. Մամեդկուլիզադեն տեսավ, համոզվեց, որ հայ և ադրբեջանական ժողովուրդները սովետական իշխանության շնորհիվ ձեռք են բերում շտեմնված նվաճումներ:

Սովետական իշխանության շնորհիվ ադրբեջանական և հայ ժողովուրդների միջև ստեղծված իսկական, ամուր բարեկամությունն իր փայլուն արտահայտությունը գտավ Ջ. Մամեդկուլիզադեի 1927 թ. գրած «Հանգիստ ականջս կամ յոթը տարի» ֆելիետոնում:

Սովետական իշխանությունը արմատախիլ արեց անցած թշնամանքը, մեր ժողովուրդներին միացրեց հավիտենական բարեկամության ընտանիքում: Նոր կարգերի յոթ տարիները մեծ գրողին հանգեցրին այն եզրակացության, որ սովետական իշխանությունը վերացրել է անցյալի սև լիժը և ժողովուրդներին դարձրել հավիտենական եղբայրներ ու բարեկամներ: Նա գրում էր. «Ես մի խեղճ մուլա եմ և շատ շատ խորը գործերից զուրխ չեմ հանում: Բայց երբ վերցնում եմ այս յոթ տարին և վերցնում եմ այս յոթ տարվանից առաջվա դարերը, մեջտեղ է գալիս երկրի ու երկնքի չափ մեծ տարբերություն: Այսպես, օրինակ, առաջներում երկու հարևանները իրար վրա ընկնելով՝ կոպում էին, բայց հիմա ձեռք ձեռքի տված՝ միասին աշխատում են»³⁶:

Ֆելիետոնի վերջում հեղափոխական-դեմոկրատ գրողը իր սրտագին ողջույններն է հաղորդել սովետական իշխանությանը՝ հայ և ադրբեջանական ժողովուրդներին հավիտենական եղբայրության ընտանիքում միացնելու համար:

Զալիլ Մամեդկուլիզադեի կյանքի ու գործունեության մի շարք տարիները կապված են Երևանի հետ (1898—1903 թթ.): Իսկ հետագայում, Թիֆլիսում և Բաքվում ապրելու ժամանակ, նա բարեկամական կապերի մեջ է եղել հայ մշակույթի ու գրականության գործիչների հետ: Դեռ հեղափոխությունից շատ առաջ Զալիլ Մամեդկուլիզադեի գրական-հասարակական գործունեությունը բարձր է գնահատվել հայ առաջավոր մտավորականության կողմից:

Զալիլ Մամեդկուլիզադեն մեծարում է նաև հայ ժողովուրդը, որի մտերիմ, ջերմ բարեկամներից է եղել նա: Հանրապետության Մինիստրների սովետը Զալիլ Մամեդկուլիզադեի անվամբ է կոչել էջմիածնի շրջանի Ղարաղջլաղ գյուղի միջնակարգ դպրոցը: Հուշատախտակ է դրվել նույն շրջանի Հրազդանի ավանում, ուր մեծ գրողը 1887 թ. սկսել է իր հասարակական գործունեությունը:

³⁴ Գ. Մեմեդգուլուզադե, Сечилмиш эсэрлэри, II ч., էջ 96:

³⁵ Мир Чәләл Пашајев, Գ. Մեմեդգուլուզադե, бах: «Азәрбајҹан әдәбијјатı тарихı», II чилд, Бақы, 1961, էջ 561:

³⁶ Գ. Մեմեդգուլուզադե, Сечилмиш эсэрлэри, I ч., էջ 423:

³⁷ Գ. Մեմեդգուլուզադե, Фелјетонлар..., էջ 742—743: